3. Հայցը մասնակիորեն բավարարվելու դեպքում դատարանը, ելնելով գործի հանգամանքներից, լուծում է հայցի ապահովման միջոցն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնելու հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի եզրահանգումներ՝ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու մասին:

Տվյալ դեպքում 12.09.2023 թվականին Դատարանը (դատավոր՝ Ա.Բաղիրյան) <<Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին>> որոշում է կայացրել, որով որոշել է որպես հայցի ապահովման միջոց, արգելել <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը վճարել 2 896 986.00 ՀՀ դրամը՝ որպես <<ՓՊՄԱՊՁԲ-23-7/29-3>> ծածկագրով պայմանագրի կատարման ապահովում և 4 345 479.00 ՀՀ դրամը՝ որպես <<ՓՊՄԱՊՁԲ-23-7/29-3>> ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովում՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը և տրվել է կատարողական թերթ:

Տվյալ դեպքում հայցը մերժելու պարագայում վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո հա. ԵԴ2/28043/02/23 քաղաքացիական գործով կիրառված հայցի ապահովման միջոցներն ենթակա են վերացման:

*5. **Վճռի օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ դատարանի իրավական վերլուծությունները.***

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ **պատվիրատուի** և գնահատող հանձնաժողովի **գործողությունների** (անգործության) և **որոշումների** բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV
(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ի ընդդեմ պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարության՝ <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 17.08.2023 թվականի թիվ 76 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը մերժել.
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Հա. ԵԴ2/28043/02/23 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ա.Բաղիրյան)

12.09.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո վերացնել:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՕՀԱՆՅԱՆ